

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2018 թվականի N ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1696-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի վերակազմավորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 954-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1696-Ն որոշման՝

1) 7-րդ, 9-րդ, 10-րդ կետերում և 2-րդ հավելվածի վերնագրում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության» բառերը փոխարինել «Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով.

2) N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
 ՀՀ կառավարության 2018 թվականի
 -ի N - Ն որոշման

« Հավելված N 4
 ՀՀ կառավարության 2017 թվականի
 դեկտեմբերի 21-ի N 1696 – Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Շենքերի և շինությունների անվանումը	Գտնվելու վայրը	Շահա- գործ- ման տարե- թիվը	Մակերեսը (քառ. մ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Մաշվածու- թյունը (դրամ)	Հաշվեկշռա-յին արժեքը, գնահատված կադաստրային արժեքը 01.01.2016 թ. դրությամբ (դրամ)	Սեփականության իրավունքի գրանց- ման վկայականը տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և համարը	Հողա- մասը (հա)	Վիճակը	Այլ նշում- ներ
-----------	--	-------------------	--	----------------------	-------------------------------	-------------------------------	--	--	-----------------------	--------	----------------------

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Թանգարան-ինստիտուտի շենք	քաղ. Երևան, Կենտրոն, Ծիծեռնա կաբերդի գոթսայգի	1995 թ.	5806.7	1876147557	1018985750	857161807	16.03.2018 թ. N 16032018-01-0152 ()	98.44726 0.38594	լավ	
2.	Ստորգետնյա կառույց		2003 թ.	128.5	25507170	14025438	11481732			լավ	
3.	Օժանդակ շինություն			86.3	15879354	0	15879354			լավ	
4.	Պահակատուն		2001 թ.	4.1	1419375	783158	636217			լավ	
5.	Պահակատուն		2001 թ.	4.1	1419374	783158	636217			լավ	
6.	Պահակատուն		2001 թ.	4.1	1419374	775613	643761			լավ	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
7.	Շինություն			18.74	3269152	0	3269152			լավ	
8.	Անմար կրակի հուշարձան		1967	513	231822818	0	231822818				
9.	Հուշարձան կոթող		1967	6.4	11372588	0	11372588			լավ	
10	Հուշապատ		1967	156.5	22247625	0	22247625			լավ	
11.	հարթակ			3727.5	5703075	0	5703075			լավ	
	Ընդամենը				2196207462	1035353117	1160854345			լավ	

»:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1696-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 21-ի N 1696-Ն որոշման /այսուհետ՝ Որոշում/ 11-րդ կետի 1-ին ենթակետի հանձնարարականի կատարումն ապահովելու ընթացքում պարզվել է, որ Որոշման 4-րդ հավելվածում նշված անշարժ գույքի անվանումները /անվանումները և մակերեսները նշվել են N 06082012-01-0936 վկայականի նշված անվանումներից/ չի համապատասխանում առկա գտնվող անշարժ գույքի անվանումների հետ: Նշված վկայականում ներառված է շինություններ, որոնք արդեն գոյություն չունեն, և կան շինություններ որոնք չեն ներառվել վկայականում:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված քաղ. Երևան, Կենտրոն, Ծիծեռնակաբերդի զբոսայգի հասցեում գտնվող անշարժ գույքն ամրացված է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին /այսուհետ՝ Կոմիտե/: Բաց թողնված գույքի հաշվառման նպատակով բանավոր քննարկվել է Կոմիտեի հետ և առաջարկվել է վկայականում կատարել համապատասխան փոփոխություն:

Կոմիտեի կողմից կատարվել է ճշտման գործընթաց և 16.03.2018թ. տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նոր N 16032018-01-0152 վկայական, որում նշված անշարժ գույքի անվանումները չեն համընկնում Որոշման N4 հավելվածում նշված անշարժ գույքերի անվանումներին, ինչը խոչընդոտ է հանդիսանում «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հետ անհատույց օգտագործման պայմանագրի կնքելուն:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել կատարել համապատասխան փոփոխություններ և N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

Կարգավորման նպատակը և բնույթը

Նշված նախագծի ընդունմամբ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հետ կկնքվեն հիմնադրամի կողմից օգտագործվող անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1696-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1696-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	Ֆինանսների նախարարություն 2018-10-18 թիվ 01/9-5/18812-18	Առաջարկություն և դիտողություն չունի		
2.	Տնտեսական գրգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի 2018-10-10 01/22.34/5879-18	Առաջարկություն և դիտողություն չունի		

3.	<p>Անշարժ գույքի կադաստրի Կոմիտե 2018թ.-10-10 ԱՄ/5816-18</p>	<p>Առաջարկություն և դիտողություն չունի</p>		
4.	<p>Արդարադատության նախարարություն 2018թ.-10-3 01/14/626366-18</p>	<p>Առաջարկում է 1. Նախագծի վերնագրում „փոփոխություններ և լրացումներ,, բառերն անհրաժեշտ է փոխարինել „փոփոխություն,, բառով՝ նկատի ունենալով, որ նախագծում նախատեսվում է միայն փոփոխություն: 2.Նախագծի 1-ին կետով խմբագրվում է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1696-Ն որոշման /այսուհետ՝ որոշում/ 4-րդ հավելվածը, որի արդյունքում 4-րդ հավելվածի վերնագիրը չի համապատասխանում վերոնշյալ որոշման 9-րդ կետին, որով հաստատվել է հավելված 4-ը: Այդ առումով որոշման 9-րդ կետում „Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության,, բառերն անհրաժեշտ է փոխարինել „Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի,, բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև</p>	<p>1.Ընդունվել է 2. Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի վերնագիրը առաջարկին համապատասխան լրամշակվել է: 2. Որոշման նախագծում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություններ:</p>

		<p>որոշման ամբողջ տեքստին: Միաժամանակ նույն կետում „954-ն,, բառերն անհրաժեշտ է փոխարինել „954-Ն,, բառերով: 3. Հավելված 1-ի վերնագրից վերև աջ անկյունում անհրաժեշտ է լրացնել „Հավելված 4, ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N1696-Ն որոշման,, բառերը:</p>	<p>3.Ընդունվել է</p>	<p>3. Որոշման նախգծի հավելվածում առաջարկին համապատասխան կատրվել է լրացում:</p>
--	--	--	----------------------	--